## Ophrys oestrifera M. Bieb. — Սարդակիր բոռակիր — Офрис оводоносная

*NT* B 1 ab(ii,iii,iv) + 2 ab(ii,iii,iv)*




Վտանգման սպառնացող վիճակին մոտ գտնվող տեսակ է: Հայտնի են 10 սուպոպուլյացիաներ Իջևանի, Զանգեզուրի և Մեղրու ֆլորիստիկական շրջաններում: Բոլոր խոլորձազգիների նման ենթարկվում է չվերահսկվող հավաքի, գեղազարդային բարձրարժեք հատկանիշների համար: Տեսակին նաև սպառնում է աճելավայրերի խախտում՝ ճանապարհաշինության պատճառով: Հիմնական արեալը շատ մեծ է, որի պատճառով սպառնալիքի կարգավիճակը իջեցվել է մինչև NT:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2 կարգավիճակով՝ հազվագյուտ տեսակ:

Ընդգրկված է CITES–ի կոնվենցիայի հավելվածում որպես Orchidaceae ընտանիքի ներկայացուցիչ:

Բեռնի կոնվենցիայի հավելվածներում ընդգրկված չէ:

Near threatened species. 10 sub–populations are known in Idjevan, Zangezur and Meghri floristic regions. It is collected by local population as ornamental plant (like many other Orchidaceae species). The habitats disturbance because of road constructions may lead to decline of area of occupancy. Since the general area of distribution is situated beyond of Armenia the category of threat has been downgraded to NT.

It was included in the first edition of the Red Data Book of Armenia under Category 2: Rare species.

As a representative of Orchidaceae family the species is included in the Annex of CITES.

It is not included in the Annexes of the Bern Convention.



© Կամիլլա Թամանյան
© Kamilla Tamanyan

**Սկզբնաղբյուրներ\References**
Հայաստանի ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի հերբարիումի նյութեր
Herbarium materials of the Institute of botany of NAS RA.
Аверьянов Л. В., Нерсесян А. А. 2001. Род Ophrys. Флора Армении, 10: 217–221. Liechtenstein.
Красная книга Армянской ССР. 1989: 179. Ереван.
Կազմող՝ Ա. Ա. Ներսեսյան
Compiler A. A. Nersesyan

### Orchis simia Lam. — Խոլորձ կապիկի — Ятрышник обезьяний




*NT* B 2 ab(ii,iii,iv)*

Վտանգման սպառնացող վիճակին մոտ գտնվող տեսակ է: Հանդիպում է Իջևանի, Զանգեզուրի և Մեղրու ֆլորիստիկական շրջաններում: Տարածման շրջանի մակերեսը 20000 քառ. կմ–ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 2000 քառ. կմ–ից պակաս: Տեսակին սպառնում է աճելավայրերի խախտում՝ ճանապարհաշինության պատճառով: Նկատի ունենալով տեսակի ընդհանուր մեծ տարածումը, հայկական պոպուլյացիայի հարավային սահմանի անմիջական հարևանությունը իրանական պոպուլյացիայի հետ՝ սպառնալիքի կատեգորիան իջեցվել է մինչև NT:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2 կարգավիճակով՝ հազվագյուտ տեսակ:

Ընդգրկված է CITES–ի կոնվենցիայի հավելվածում որպես Orchidaceae ընտանիքի ներկայացուցիչ:

Բեռնի կոնվենցիայի հավելվածներում ընդգրկված չէ:

Near threatened species. It is known from Idjevan, Zangezur and Meghri floristic regions. The extent of occurrence is less than 20000 km$^2$, the area of occupancy is less than 2000 km$^2$. The main threat for the species is habitats disturbance as a result of road constructions. The category of threat has been downgraded to NT, because of rather wide distribution in Armenia and close connections with neighboring populations in Iran.

It was included in the first edition of the Red Data Book of Armenia under Category 2: Rare species.

As a representative of Orchidaceae family the species is included in the Annex of CITES.

It is not included in the Annexes of the Bern Convention.



© Կամիլլա Թամանյան
© Kamilla Tamanyan

**Սկզբնաղբյուրներ\References**

Հայաստանի ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի հերբարիումի նյութեր
Herbarium materials of the Institute of botany of NAS RA.
Аверьянов Л. В., Нерсесян А. А. 2001. Род Orchis. Флора Армении, 10: 199–210. Liechtenstein.
Красная книга Армянской ССР. 1989: 183. Ереван.

Կազմող՝ Ա. Ա. Ներսեսյան
Compiler A. A. Nersesyan

## Alopecurus tuscheticus Trautv. — Աղվեսագի թուշեթական — Лисохвост тушетский

*NT* B 1 ab(iii) + 2ab(iii)*






© ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի հերբարիում
© Herbarium of the Institute of Botany of NAS of Armenia

Վտանգման սպառնացող վիճակին մոտ գտնվող տեսակ է: Կովկասի էնդեմիկ է: Հանրապետությունում շատ առատ հանդիպում է Արագածի և Գեղամա բարձրավանդակի ենթալպյան և ալպյան մարգագետիններում: Ներկայումս ուղղակի սպառնալիք տեսակի գոյության համար չկա: Սակայն աճելավայրերի պայմանների փոփոխության հետ կապված՝ հատկապես կլիմայի փոփոխության ու ինտենսիվ արածեցման հետ, կարող է կրճատվել տեսակի բնակության շրջանը: AOO՝ 32 քառ. կմ է: Լոկալիտետները՝ 2: Տեսակի հիմնական տարածման շրջանը գտնվում է Հայաստանի սահմաններից դուրս, որի հետևանքով սպառնալիքի կատեգորիան իջեցված է մինչև NT:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

CITES–ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում բացակայում է:

Near threatened species. Endemic of the Caucasus. Two sub–populations in the alpine meadows of Aragats and Gegham mountains are very abundant. At present there are no real threats for species' existence. However global climate change and meadows overgrazing may lead to decline of the area of occupancy. The area of occupancy is 32 km², number of locations is 2. Since the general area of distribution is situated beyond Armenia the threat category has been downgraded to NT.

It was not included in the first edition of the Red Data Book of Armenia.

It is not included in the Annexes of CITES and that of the Bern Convention.

**Սկզբնաղբյուրներ\References**

Հայաստանի ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի հերբարիումի նյութեր
Herbarium materials of the Institute of botany of NAS RA.
Цвелев Н. Н. 2006. Род Alopecurus. Конспект флоры Кавказа, 2: 340–343. Санкт–Петербург.
Нерсесян А. А. 2009. Род Alopecurus. Флора Армении, 11: 330–342.

Կազմող՝ Գ. Մ. Ֆայվուշ
Compiler G. M. Fayvush

**Boissiera squarrosa (Banks et Sol.) Nevski — Բուասիերա չռված — Буасьера растопыренная**




*NT* B 1 ab(iii) + 2 ab(iii)*

Վտանգման սպառնացող վիճակին մոտ գտնվող տեսակ է: Ներկայումս բավականին լայն տարածված է Երևանի և Դարելեգիսի ֆլորիստիկական շրջանների կիսաանապատային գոտում և ուղղակի սպառնալիք նրա գոյությանը բացակայում է, և նույնիսկ կարելի է ենթադրել արեալի ընդարձակում վերջին տարիների ընթացքում: Սակայն աճելավայրերի պայմանների փոփոխությունը, հատկապես կապված տարածքների ինտենսիվ յուրացման և արածեցման հետ, կարող է հանգեցնել տեսակի բնակության շրջանի կրճատմանը: EOO 1230 քառ. կմ է, AOO՝ 80 քառ. կմ: Լոկալիտետները՝ 6: Տեսակի հիմնական տարածման շրջանը գտնվում է Հայաստանի սահմաններից դուրս: Հետևաբար սպառնալիքի կատեգորիան նվազել է մինչև NT:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

CITES–ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում բացակայում է:

Near threatened species. At present it is rather wide distributed in semi–deserts of Yerevan and Darelegis floristic regions. There are no real threats for species' existence. Even more, in the last years it was notified enlargement of the area of distribution. However the species grows on the territory of intensive land development and grazing. The extent of occurrence is 1230 km², the area of occupancy is 80 km², number of locations is 6. Since the general area of distribution is situated beyond Armenia the category of threat has been downgraded to NT.

It was not included in the first edition of the Red Data Book of Armenia.

It is not included in the Annexes of CITES and that of the Bern Convention.



© www.igb.agri.gov.il

**Սկզբնաղբյուրներ\References**

Հայաստանի ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի հերբարիումի նյութեր
Herbarium materials of the Institute of botany of NAS RA.
Цвелев Н. Н. 2006. Род Boissiera. Конспект флоры Кавказа, 2: 285. Санкт–Петербург.
Габриэлян Э. Ц. 2009. Род Boissiera. Флора Армении, 11: 122–123.

Կազմող՝ Գ. Մ. Ֆայվուշ
Compiler G. M. Fayvush

## Hordeum spontaneum K.Koch — Գարի վայրի երկշարք — Ячмень дикий двурядный






© Ամիկամ Շուբ
© Amikam Shoob

*NT* B 1 ab(iii) + 2 ab(iii)*

Վտանգման սպառնացող վիճակին մոտ գտնվող տեսակ է: Տեսակը հանդիպում է Իջևանի, Երևանի և Մեղրու ֆլորիստիկական շրջաններում և ուղղակի սպառնալիք նրա գոյության համար բացակայում է: Սակայն տեսակի աճման պայմանների փոփոխությունը, կապված հատկապես տարածքների ինտենսիվ յուրացման և արածեցման հետ, կարող է հանգեցնել բնակության շրջանի կրճատմանը: EOO 14630 քառ. կմ է, AOO՝ 36 քառ. կմ: Լոկալիտետները՝ 6: Քանի որ տեսակի հիմնական տարածման շրջանը գտնվում է Հայաստանի սահմաններից դուրս, սպառնալիքի կատեգորիան նվազեցվում է մինչև NT:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2 կարգավիճակով՝ հազվագյուտ տեսակ:

CITES–ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

Near threatened species. It occurs in Idjevan, Yerevan and Meghri floristic regions. At present there is no real threat for its existence. However land development for agricultural purposes and overgrazing may lead to decline of the area of occupancy. The extent of occurrence is 14630 km², the area of occupancy is 36 km², number of locations is 6. Since the general area of distribution is situated beyond Armenia the category of threat has been downgraded to NT.

It was included in the first edition of the Red Data Book of Armenia under Category 2: Rare species.

It is not included in the Annexes of CITES and that of the Bern Convention.

### Սկզբնաղբյուրներ\References

Հայաստանի ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի հերբարիումի նյութեր
Herbarium materials of the Institute of botany of NAS RA.
Красная книга Армянской ССР. 1989: 195–196. Ереван.
Цвелев Н. Н. 2006. Род Hordeum. Конспект флоры Кавказа, 2: 272–274. Санкт–Петербург.
Назарова Э. А. 2009. Род Hordeum. Флора Армении, 11: 104–115. Koeltz Scientific Books.

Կազմող՝ Գ. Մ. Ֆայվուշ
Compiler G. M. Fayvush

# PYROLACEAE — ՍՊՆԴՈՒԿԱԶԳԻՆԵՐ — ГРУШАНКОВЫЕ

## Pyrola media Sw. — Սպնդուկ միջին — Грушанка средняя

*NT* B 1 ab(iii) + 2 ab(iii)*






© Գեորգի Ֆայվուշ
© Georgi Fayvush

Վտանգման սպառնացող վիճակին մոտ գտնվող տեսակ է: Լայնորեն տարածված է Հայաստանում, տեսակի պոպուլյացիան կազմված է 5 լոկալիտետներից, տարածման շրջանը 20000 քառ. կմ–ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում՝ աճման պայմանների փոփոխության պատճառներով: Կապված շատ մեծ ընդհանուր տարածման հետ՝ սպառնալիքի կատեգորիան նվազեցված է մինչև NT:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ CITES–ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

Near threatened species. It is rather wide distributed in Armenia. Five locations are known in different parts of the Republic. The extent of occurrence is less than 20000 km$^2$. The main threat is the habitats disturbance. Since the very wide general distribution the category of threat has been downgraded to NT.

It was not included in the first edition of the Red Data Book of Armenia.

It is not included in the Annexes of CITES and that of the Bern Convention.

**Սկզբնաղբյուրներ\References**

Հայաստանի ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի հերբարիումի նյութեր

Herbarium materials of the Institute of botany of NAS RA.

Мулкиджанян Я. И. 1973. Род Pyrola. Флора Армении, 6: 12–13. Ереван.

Կազմող՝ Գ. Մ. Ֆայվուշ
Compiler G. M. Fayvush

## Alchemilla sevangensis Juz. — Գայլաթաթ սևանի — Манжетка севанская

*NT* B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)*






© ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի հերբարիում
© Herbarium of the Institute of Botany of NAS of Armenia

Վտանգման սպառնացող վիճակին մոտ գտնվող տեսակ է: Հայաստանի էնդեմիկ է: Աճում է Լոռու, Ապարանի, Սևանի և Գեղամի ֆլորիստիկական շրջաններում: Ուղղակի սպառնալիք նրա գոյության համար բացակայում է: EOO 1500 քառ. կմ է, AOO՝ 24 քառ. կմ, լոկալիտետները՝ 5: Արեալը մասնատված է:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ CITES–ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

Near threatened species. Endemic of Armenia. It is known from Lori, Aparan, Sevan and Gegham floristic regions. The extent of occurrence is 1500 km², the area of occupancy is 24 km², number of locations is 5. The area of distribution is fragmented. Since the real threat for species' existence is absent the category of threat has been downgraded to NT.

It was not included in the first edition of the Red Data Book of Armenia.

It is not included in the Annexes of CITES and that of the Bern Convention.

**Սկզբնաղբյուրներ\References**

Հայաստանի ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի հերբարիումի նյութեր

Herbarium materials of the Institute of botany of NAS RA.

Мулкиджанян Я. И. 1958. Род Alchemilla. Флора Армении, 3: 171. Ереван.

Կազմող՝ Ժ. Ա. Հակոբյան

Compiler Zh. A. Hakobyan

## Populus euphratica Olivier — Բարդի եփրատի — Тополь евфратский




*NT* B 1 ab(iii) + 2 ab(iii)*

Վտանգման սպառնացող վիճակին մոտ գտնվող տեսակ է: Տեսակը առատորեն հանդիպում է Մեղրու ֆլորիստիկական շրջանում, Արաքս գետի հունի երկարությամբ և դրա մեջ թափվող գետերի ափերին: Բացի այդ հայտնի է մեկ պոպուլյացիա Երևանի ֆլորիստիկական շրջանում, Ուրծի լեռնաշղթայի կիրճում: Ուղղակի սպառնալիք տեսակի գոյության համար բացակայում է: Սակայն տեսակի աճման վայրերի պայմանների փոփոխությունը՝ կապված հատկապես տարածքների ինտենսիվ յուրացման հետ, կարող է առաջացնել բնակության շրջանի կրճատում: EOO 1500 քառ. կմ է, AOO՝ 40 քառ. կմ: Լոկալիտետները՝ 3: Տեսակի հիմնական տարածման շրջանը գտնվում է Հայաստանի սահմաններից դուրս, հետևաբար սպառնալիքի կատեգորիան նվազեցվել է մինչև NT:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2 կարգավիճակով՝ հազվագյուտ տեսակ:

CITES–ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

Near threatened species. Sub–population is very abundant in Meghri floristic region – in the Arax river valley. One more small sub–population is known in Yerevan floristic region in the gorge on Urts mountain ridge. There is no real threat for species' existence. However intensive land development may lead to decline of the area of occupancy. The extent of occurrence is 1500 km², the area of occupancy is 40 km², number of locations is 3. Since the main area of distribution is situated beyond Armenia the category of threat was downgraded to NT.

It was included in the first edition of the Red Data Book of Armenia under Category 2: Rare species.

It is not included in the Annexes of CITES and that of the Bern Convention.



© www.flowersinisrael.com

**Սկզբնաղբյուրներ\References**

Հայաստանի ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի հերբարիումի նյութեր
Herbarium materials of the Institute of botany of NAS RA.
Красная книга Армянской ССР. 1989: 216. Ереван.
Мулкиджанян Я. И. 1966. Род Populus. Флора Армении, 5: 330. Ереван.

Կազմող՝ Գ. Մ. Ֆայվուշ
Compiler G. M. Fayvush

## Thesium szovitsii DC. — Թեզիում Սովիչի — Ленец Совича

*NT* B 1 ab(iii) + 2 ab(iii)*




Վտանգման սպառնացող վիճակին մոտ գտնվող տեսակ է: Տեսակը ներկայումս լայնորեն տարածված է Երևանի ֆլորիստիկական շրջանում: Հանդիպում է նաև Դարելեգիսի ֆլորիստիկական շրջանում: Նրա գոյությանը ուղղակի սպառնալիք բացակայում է: Սակայն աճման պայմանների փոփոխությունը՝ կապված հատկապես տարածքների ինտենսիվ յուրացման հետ՝ կարող է առաջացնել տեսակի բնակության շրջանի կրճատում: EOO՝ 700 քառ. կմ է, AOO՝ 68 քառ. կմ: Լոկալիտետները՝ 11: Տեսակի հիմնական տարածման շրջանը գտնվում է Հայաստանի սահմաններից դուրս, հետևաբար սպառնալիքի կատեգորիան նվազեցվում է մինչև NT:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման անմիջական սպառնալիքի ներքակա:

CITES–ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

Near threatened species. At present the species is rather wide distributed in Yerevan floristic region, it is found in Darelegis floristic region as well. There is no real threat for species' existence. However intensive land development may lead to decline of the area of occupancy. The extent of occurrence is 700 km², the area of occupancy is 68 km², number of locations is 11. Since the general area of distribution is situated beyond Armenia the category of threat has been downgraded to NT.

It was included in the first edition of the Red Data Book of Armenia under Category 1: Endangered species.

It is not included in the Annexes of CITES and that of the Bern Convention.



© ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի հերբարիում
© Herbarium of the Institute of Botany of NAS of Armenia

**Սկզբնաղբյուրներ\References**

Հայաստանի ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի հերբարիումի նյութեր
Herbarium materials of the Institute of botany of NAS RA.
Габриэлян Э. Ц. 1973. Род Thesium. Флора Армении, 6: 449–454. Ереван.
Красная книга Армянской ССР. 1989: 217. Ереван.

Կազմող՝ Գ. Մ. Ֆայվուշ
Compiler G. M. Fayvush

**Physochlaina orientalis (M.Bieb). G.Don fil. — Ֆրարուլս արևելյան — Пузырница восточная**




*NT* B 1 ab(ii,iii,iv,v) + 2 ab(ii,iii,iv,v)*

Վտանգման սպառնացող վիճակին մոտ գտնվող տեսակ է: Հայտնի են 6 փոքր թվով անհատներից կազմված սուպոպուլյացիաներ 4 ֆլորիստիկական շրջաններում: Մեկ սուպոպուլյացիայի գոյությունը հաստատման կարիք ունի (1922 թ. հավաք): Տեսակին սպառնում է կլիմայի գլոբալ փոփոխությունը, գյուղատնտեսական հանդակների ընդլայնումը:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2 կարգավիճակով՝ հազվագյուտ տեսակ:

CITES–ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

Near threatened species. 6 sub–populations from 4 floristic regions are known. It is necessary to check the state of one population, because since 1922 there are no new data. Global climate change and arable land expansion may decline the area of occupancy of the species. Since the general area of distribution is situated beyond Armenia the category of threat has been downgraded to NT.

It was included in the first edition of the Red Data Book of Armenia under Category 2: Rare species.

It is not included in the Annexes of CITES and that of the Bern Convention.



© Մարինե Հովհաննիսյան
© Marine Oganesian

**Սկզբնաղբյուրներ\References**


Հայաստանի ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի հերբարիումի նյութեր

Herbarium materials of the Institute of botany of NAS RA.

Аветисян В. Е. 1987. Род Physochlaina. Флора Армении, 8: 173–174. Ереван.

Красная книга Армянской ССР. 1989: 222. Ереван.



Կազմող՝ Ա. Ա. Ներսեսյան

Compiler A. A. Nersesyan